

**ՀԱՅԱՍՏԱՆԸ ԲՅՈՒՉԱՆԴԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ
(520-560-ԱԿԱՆ ԹԹ.)**

Լիզա Քարիմյան

V դարի վերջին և VI դարում հայ-բյուզանդական հարաբերությունները թևակոխում են որակական նոր ժամանակաշրջան: Քանի որ V դարի երկրորդ կեսին բյուզանդական կայսրությունը ապրում էր համեմատաբար հանդարտ կյանքով, կայսրության մեծ մասը բռնել էր վերելքի ուղին: Այդ հարաբերական հանգիստ վիճակը հնարավորություն ընձեռեց ուշադրությունը բևեռել դեպի Արևմուտք, և կայսրությանը փորձեց չեզոքացնել գոթական սպառնալիքը¹: Բավականին հանգիստ էին նաև Իրանի հետ հարաբերությունները: Հայաստանի սասանյան հատվածում շարունակվում էին հակապարսկական ապստամբությունները, որոնց արդյունքում պարսկական տերությանը չհաջողվեց իրագործել իր ծրագրերը:

Բյուզանդիայի պատմությունը նախևառաջ հռոմեական պատմության նոր դարաշրջանն էր, իսկ բյուզանդական պետությունը՝ հին հռոմեական կայսրության շարունակությունը: Բյուզանդացիները մշտապես իրենց անվանում էին հռոմեացիներ (Ρωμαίοι), իսկ կայսերը դիտարկում որպես հռոմեական տիրակալ՝ հին հռոմեական կայսերի հաջորդող և ժառանգորդ: «Հռոմ» անունը բոլոր ժամանակներում հմայում էր նրանց, իսկ հռոմեական պետական ավանդույթները մինչև վերջ տիրապետող էին քաղաքական մտածողության և կամքի մեջ²: **«Բացառիկության» այդ զգացումն էլ ընկած է եղել այլ ժողովուրդների նկատմամբ կայսրության քաղաքականության հիմքում**, որի պատճառն այն էր, որ «Հռոմե-

¹ Տե՛ս **Агафий**. О царствовании Юстиниана. М.-Л., 1953, с. 52.

² Տե՛ս **Острогорский Г.А.** История Византийского государства. М., 2011, с. 64: Այդ փաստն է վկայում նաև կայսրությունում արմատավորված այն մտայնությունը, թե «Մեկ Աստված կա երկնքում, մեկ թագավոր՝ երկրի վրա. անհնար է երկինքը պատկերացնել առանց Աստծու, ոչ էլ երկիրը՝ առանց կայսրի...», **Успенский Ө.И.** История Византийской Империи. Т. I, СПб., 1912, с. 41. Հմմտ.՝ **Васильев А. А.** История Византийской империи. Время до Крестовых походов (до 1081 г.). СПб., 1998, с. 117-118; **Кулаковский Ю.А.** История Византии. Т. 1. 395-518 годы. СПб., 2003, с. 138-141.

ական կայսրության ժառանգորդի որակով Բյուզանդիան ցանկանում էր լինել միակ կայսրությունն աշխարհում. այստեղից էլ հավակնություն էր առաջադրվում տիրապետել բոլոր այն հողերին, որոնք ինչ-որ ժամանակ պատկանում էին հռոմեական «շրջանին» (orbis terrarum), իսկ այժմ քրիստոնեական «տիեզերքի» (οἰκουμένη` Լ. Ք.) մաս էին կազմում¹: Լիովին համահունչ էր նաև այն, որ առաջնորդվելով «Հռոմի գործը Աստծու գործն է. այն աշխարհիկ զենքի կարիք չունի» (Res Romana Dei est: terrenis non eget armis) կարգախոսով՝ «... բյուզանդական կայսրը իրեն դիտում էր որպես բնակեցված ողջ աշխարհի տիրակալ: Նա ձգտում էր իր քաղաքական ու կրոնական ազդեցությունը տարածել ոչ միայն կայսրության հարևանների, այլև այդ ժամանակ աշխարհում հայտնի գրեթե բոլոր ժողովուրդների վրա»²:

Ընդհանրապես, այս գործընթացում ուրույն տեղ է գրավել «բյուզանդականություն» երևույթը: «Բյուզանդականություն ասելով, - գրում է Ֆ. Ուսպենսկին, - ամենից առաջ պետք է նկատի ունենալ բոլոր այն սկզբունքների ամբողջությունը, որոնց ազդեցությամբ V–VIII դարերում աստիճանաբար բարեփոխվում էր Հռոմեական կայսրությունը, մինչև որ վերածվեց Բյուզանդական կայսրության: Ինչպես որ Արևմուտքում կազմակերպական սկիզբը դարձավ հռոմեականությունը, այնպես էլ Արևելքում կազմակերպական սկիզբ դարձավ բյուզանդականությունը, և այդ դիտանկյունից էլ պետք է բացատրվի «բյուզանդականություն» եզրը»³: Էական դեր է կատարել նաև այն, որ կայսրության տարածքում «Քաղաքական և մշակութային միասնությունը պաշտպանվում էր կրոնական գիտակցության միասնականությամբ, որն արևմուտքում, հանձին Հռոմի պատրիարքի, ի սկզբանե ուներ մեկ գլուխ, որն իր հեղինակությունը հաստատել էր ս. Պետրոսի անսասան քարի վրա: Առավել անմիջական միավորված և ամրապնդված Արևմտյան կայսրությունը, թվում էր, ավելի շատ նախադրյալներ ուներ միասնական մնալու, քան Արևելյանը»⁴: Իսկ Արևելքում «... էթնիկական առումով բազմազգ կայսրությունը պահպանվում էր հռոմեական պետականության գաղափարի շնորհիվ, իսկ նրա

¹ **Острогорский Г.А.** История Византийского государства, с. 65.

² **Диль Ш.** Основные проблемы Византийской истории. М., 1948, с. 129.

³ **Успенский Ф.И.** История Византийской Империи. Т. 1, с. 42.

⁴ **Кулаковский Ю.А.** История Византии. Т. 1. 395-518 годы, с. 59.

դիրքը շրջապատող աշխարհում որոշվում էր հռոմեական համապարփակության գաղափարով»¹:

Քննարկվող շրջանում հասունանում էր նաև կայսերական Արևմուտքի և Արևելքի պառակտումը²: Բյուզանդագիտության մեջ հանրաճանաչ է, որ «Այդ դարաշրջանը, որին կարելի է անվանել ինչպես վաղ բյուզանդական, այնպես էլ ուշ հռոմեական, հավասարապես պատկանում է և՛ հռոմեական, և՛ բյուզանդական զարգացմանը, ներառում է բյուզանդական առաջին երեք դարերը, կամ էլ՝ Հռոմեական կայսրության վերջին երեք դարերը: Դա տիպիկ անցման դարաշրջան է, որը մեզ Հռոմեական կայսրությունից տանում է դեպի միջնադարյան բյուզանդական կայսրություն, և որում կյանքի հին հռոմեական ձևերն աստիճանաբար մահանում են, իսկ նորը՝ բյուզանդականը, ավելի հաստատուն կերպով բարձրանում է մակերես»³: Այդ գործընթացի գլխավոր ակունքները եղել են «հռոմեական պետականությունը, հունական մշակույթը և քրիստոնեական հավատը ...: Այդ երեք տարրերից ցանկացածի բացակայության պայմաններում Բյուզանդիայի էությունը դառնում է անիմաստ: Հռոմեական պետական ձևի հետ միայն հելլենիստական մշակույթի և քրիստոնեական կրոնի համադրությունը թույլ տվեց ձևավորել պատմական այն կառույցը, որը սովորաբար անվանում ենք Բյուզանդական կայսրություն»⁴: Նույնքան ակնհայտ է նաև այն, որ վերոնշյալ համադրությունը հնարավոր դարձավ միայն այն բանի շնորհիվ, երբ կայսրության կենտրոնը տեղափոխվեց արևելք, և որն «... իր առավել ակնհայտ դրսևորումը ստացավ Imperium Romanum-ի քրիստոնեականացման և Բոսֆորի ափին նոր մայրաքաղաքի հիմնադրումով: Այդ երկու իրադարձությունները՝ քրիստոնեության հաղթանակը և պետության կենտրոնի վերջնական տեղափոխումը հելլենականացված Արևելք, իրենցով նշանավորեցին բյուզանդական դարաշրջանի սկիզբը»⁵:

¹ **Острогорский Г.А.** История Византийского государства, с. 64-65.

² Տե՛ս **Кулаковский Ю.А.** История Византии. Т. 1. 395-518 годы, с. 61.

³ **Острогорский Г.А.** История Византийского государства, с. 66.

⁴ **Նույն տեղում**, с. 64, 69-70: Տե՛ս նաև **Диль Ш.** Основные проблемы Византийской истории. М., 1948, с. 22.

⁵ **Острогорский Г.А.** История Византийского государства, с. 64: Տե՛ս նաև **Иоанн Малала.** Хронография. Книги XIII-XVIII. Белгород, 2014, кн. XIII, с. 36-39.

VI դարում բավականին բարդ էր կայսրության Արևմտյան հատվածի կրոնական իրավիճակը: Այստեղ պետական կրոնի որակով պահպանվել էր վանդալների և օստգոթական թագավորների հովանավորությունը վայելող արիոսականությունը¹: Բացասական ուրույն տեղ էր գրավում նաև դոնատական պառակտումը հյուսիսային Աֆրիկայում: Իրավիճակն ավելի բարդ էր Արևելքում գործող հեթանոսության և միմյանց դեմ անզիջում պայքար մղող դավանական հոսանքների պատճառով: «Համախմբված այլախոհների» որակով հանդես էին գալիս նաև մեծաքանակ հրեաներն ու սամարացիները, ինչպես նաև նախորդ դարերի հերձվածները՝ մոնտանականությունը (Փոյուզիայում), մանիքեականությունը (Փոքր Ասիայում), նեստորականությունը: Ընդդիմադիր ազդեցիկ ուժ էր հակաքաղկեդոնականությունը:

Այդ ամենով պետք է բացատրել նաև այն, որ Բյուզանդական կայսրության ինչպես ներքին կայունության, այնպես էլ պետության արտաքին քաղաքական իրավիճակի գնահատման համար գլխավոր հիմնահարցեր էին **կրոնական գործոնը, պետություն-եկեղեցի հարաբերությունները և, հատկապես, դավանական-քրիստոսաբանական վեճերը**: Այդ կապակցությամբ Շ. Դիլը գրում է. «Այն օրից, երբ Կոնստանդինը քրիստոնեությունը դարձրեց պետական կրոն, կայսերական իշխանությանը իրավունք ընձեռեց խառնվել եկեղեցական բոլոր գործերին և ինքնիշխան տնօրինել եկեղեցին ...: Կայսրն էր ժողովներ հրավիրում և ... հաստատում «եկեղեցու հայրերի» որոշումները, և այդ որոշումները օրենքի ուժ էին ստանում միայն կայսեր կողմից հաստատվելուց հետո»: Ճանաչված բյուզանդագետի համար անկասկած էր նաև այն, որ եկեղեցին միանգամայն «օրինական» է համարել «իր գործերին կայսեր միջամտությունը» այն հիմնավորմամբ, որ «եկեղեցու համար կայսրը հավատքի պահպանն ու բարձրագույն տերն է»³, այսինքն՝ պետություն-եկեղեցի հարաբերություններում կայսեր իշխանությունը ոչնչով չէր սահմանափակվում: Տարածայնությունների նոր դուռ բացվեց, երբ Արևմուտքի տիրակալները զարտուղի ճանապարհներով բյուզանդական գահակալներից սկսեցին

¹ Տե՛ս **Васильев А.А.** История Византийской империи. Время до Крестовых походов (до 1081 г.), с. 144.

² **Диль Ш.** Основные проблемы Византийской истории, с. 69.

³ **Նույն տեղում**, էջ 71:

«կայսրի» տիտղոս գնել: Հակասական գործընթացների խորացման նոր քայլ հանդիսացան նաև հռոմեական աթոռի հավակնությունները՝ «Այն պարագայում, երբ արևմտյան թագավորները ձգտում էին սեփականացնել կայսեր տիտղոսը, հռոմեական քահանայապետը, ուրք դնելով փառասիրական ձգտումների ճանապարհ, մրցակցություն սկսեց Կոստանդնուպոլսի պատրիարքի հետ»²:

Այս ամենի համատեքստում VI դարի առաջին տասնամյակներին բյուզանդական կայսրերի կրոնական քաղաքականությունը պետք է քննարկել երկու՝ ա) նախաքրիստոնեական կրոնների (հեթանոսության) և վաղ քրիստոնեական հերձվածների դեմ պայքարի և բ) քաղկեդոնական-հակաքաղկեդոնական պայքարի դիտանկյունից, ինչը վկայում է, որ **կրոնական միասնության հարցը դուրս էր եկել մետաֆիզիկական-դավանական դաշտից և քաղաքական երանգավորում էր ստացել**: Եվ չնայած բյուզանդական կայսրերը ձգտել են կրոնական միասնություն հաստատել, սակայն միմյանց հաջորդող հրովարտականները, օրենսդրական և վարչական այլ ակտերը գործնականում ավելի են խորացրել եկեղեցական պառակտումները՝ ավելի անհանդուրժող ու բևեռացված դարձնելով դավանական խմբավորումները, ինչը իրականացել է այդ հոսանքների ներքին տրոհումներով: Որպես պատճառն կարելի է նշել այն, որ Բյուզանդական կայսրությունում «...եկեղեցական վարչական կառույցի համար հիմք դարձան հռոմեական վարչական կառուցվածքի ձևերը»³, որը կարելի է փաստել նիկիական 6-րդ կանոնով, որը կայսրության տարածքում հոգևոր իշխանության բարձրագույն ձև էր հաստատում մետրոպոլիական իշխանությունը: Եվ քանի որ կայսրությունում «... մետրոպոլիական իրավունքներով օժտված էին բազմաթիվ եպիսկոպոսներ, ապա մետրոպոլիտների միջև նկատվում էր պայքար հանուն իշխանության կամ Բարսեղ Մեծի խոսքերով ասած՝ «հանուն իշխանասիրության և փառամոլության»⁴:

Բյուզանդական կայսրության հոգևոր-հասարակական կյանքում և ազգամիջյան հարաբերությունների ոլորտում բացասական մեծ դեր է կա-

¹ Ֆ. Ուպենսկին այդ գործընթացը համարում է Արևմուտքի կողմից «Բյուզանդիայի առաջին թալան», տե՛ս **Успенский Ф.И.** История Византийской Империи. Т. I, с. 42.

² **Նույն տեղում**:

³ **Успенский Ф.И.** История Византийской Империи. Т. I, с. 293.

⁴ **Նույն տեղում**, էջ 300:

տարել հատկապես Կ. Պոլսի պատրիարքական աթոռը: Չբավարարվելով Կ. Պոլսի 381 թ. տիեզերական ժողովի 3-րդ կանոնով իրեն վերապահված «Նոր Հռոմի» կարգավիճակով՝ մայրաքաղաքային աթոռը Քաղկեդոնի ժողովի 28-րդ կանոնով սեփականեց նաև Արևելյան առաջին աթոռի իրավունքը², որով **իր վախճանին հասավ Արևելյան պատրիարքությունների դեմ մղվող շուրջ մեկդարյա պայքարը**: Այդ գործընթացները սերտորեն կապված են եղել կայսերական իշխանության կրոնական քաղաքականության հետ: Հռոմի եկեղեցու հետ մերձենալու փորձերը նպատակ էին հետապնդում թուլացնել Ալեքսանդրիայի և արևելյան մյուս պատրիարքությունների աճող հեղինակությունը: Բյուզանդական կայսրությունը ձգտում էր **եկեղեցական գերագույն իշխանության ամուր կենտրոն դարձնել Կ. Պոլսի պատրիարքությունը**, որով իշխանությունը գործնականում անմիջական հսկողության տակ կվերցնեք եկեղեցին³, և այդ սկզբունքով էլ «... կայսրության գոյության ողջ ընթացքում իրենց քաղաքականության մեջ առաջնորդվում էին բյուզանդական կայսրերը»⁴:

Այդ դիտանկյունից «Եկեղեցական կյանքում Կոստանդնուպոլսի Տիեզերական Եկեղեցին բյուզանդականության քաղաքական ավանդույթների ուղղակի շարունակողն էր. ինչպես Բյուզանդական կայսրությունը արգելակելով օտար քաղաքական կազմակերպությունների ձևավորումը և կենտրոնացնելով հելլենիստական տարրերը նախանձախնդրորեն պահպանում էր հելլենիզմը, այդպես էլ Կոստանդնուպոլսի պատրիարքությունը Տիեզերական Եկեղեցու գաղափարն էր զոհաբերում հելլենիզմին»⁵: Այդ պայմաններում V դարի վերջին քառորդում և ողջ VI դարում կայսերական վերնախավը միջոցներ էր ձեռնարկում երկրի հոգևոր միասնությունը վերականգնելու համար:

Այս առումով բյուզանդական քրիստոսաբանական մետամորֆոզներին ծանոթանալու համար անհրաժեշտ է ճիշտ գնահատել Քաղկեդոնի

¹ Տե՛ս **Дѣянія Вселенскихъ Соборовъ**. Т. I. Казань, 1910, с. 117.

² **Дѣянія Вселенскихъ Соборовъ**. Т. IV. Казань, 1908, с. 142-143.

³ Շ. Դիլը այդ գործոններով է բացատրում նաև այն, որ Կ. Պոլսի «... պատրիարքի հետ հարաբերություններում գրեթե միշտ վերջին խոսքը կայսրինն էր և կայսերական կառավարությունը կասեցնում էր եկեղեցին կայսերական հսկողությունից ազատելու վանականների փորձերը», **Диль Ш.** Основные проблемы Византийской истории, с. 75.

⁴ **Նույն տեղում**, էջ 77:

⁵ **Успенский Ө.И.** История Византийской Империи. Т. I, с. 40.

ժողովը: Ֆ. Ուսպենսկին ևս փաստում է, որ «... քաղաքական տեսանկյունից Քաղկեդոնի ժողովի որոշումները Բյուզանդական կայսրության համար մեծ դժբախտություն դարձան: Այն փուլում, երբ քաղաքական վեհ գաղափարն ընթանում էր դեպի եկեղեցական գիտակցություն, ասորիների և եգիպտացիների հակահունական տրամադրվածությունը միասնության տեսք ստացավ Քաղկեդոնի ժողովի դեմ բողոքի տեսքով»¹:

Գործընթացում բացասական դերակատարություն ունի նաև Բյուզանդական կայսրերի քաղաքականությունը: Նրանք առաջնային են համարել կամ արևելյան, կամ էլ արևմտյան քաղաքականությունը, ինչը, չէր կարող կայուն միասնության հիմք հանդիսանալ: Առավել ևս բարդ էր այն կայսրերի փորձը, որոնք ձգտում էին «... իրագործել արևելքի կրոնական միավորումն արևմուտքի հետ և դրա հիման վրա հաստատել կայսրության քաղաքական միասնությունը»²: Ընդ որում, այդ ոլորտում աշխարհաքաղաքական գործոնին զուգընթաց աստիճանաբար գերակշիռ դիրք է ձեռք բերել կրոնական գործոնը, որի ազդեցությամբ **կայսրության դիրքորոշումը կրոնաքաղաքական տեսք է ստացել**: Այդ պարագայում քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հատվածների միջև հավասարակշռված ճանապարհ ընտրելու փոխարեն **կայսրության արևելյան քաղաքականության հիմքում ընկած էր միագիծ դիրքորոշումը՝ հարկադրման սկզբունքը**:

VI դարի առաջին տասնամյակներից սկսած բյուզանդական քաղաքականության նշյալ միտումները դրսևորվել են նաև հայ-բյուզանդական հարաբերությունների ոլորտում: Ճիշտ է, «Վեցերորդ դարի համարյա ամբողջ երեք քառորդը անցնում է Պարսից Հայաստանում խաղաղ, առանց մեծամեծ շարժումների և ցնցումների: Գոնե այս է թելադրում ազգային և արտաքին աղբյուրների լուրջությունն այդ ժամանակի վերաբերմամբ»³, սակայն անառարկելի է նաև այն, որ ինքնուրույն քաղաքականություն վարելու հայ ժողովրդի ամեն մի փորձ հանդիպել է հարևանների բացահայտ ընդդիմությանը: Ինչ վերաբերում է հայ-բյուզանդական հարաբերություններին, ինչպես Հ. Բարթիկյանն է ցույց տալիս, ամենից առաջ հարկ է խոսել «... Հայաստանի նկատմամբ Բյուզանդական կայս-

¹ Նույն տեղում, էջ 326:

² Дьяконовъ А. Іоаннь Ефесскій и его церковно-историческіе труды. СПб., 1908, с. 52.

³ Լեո, Հայոց պատմություն, հ. II, Երևան, 1967, էջ 155:

րության վարած նվաճողական քաղաքականության մասին, հայ ժողովրդի դժվարին, ուժերից վեր, հերոսական պայքարի մասին՝ իր ինքնուրույնությունը, անկախությունը, ազգային դեմքը պաշտպանելու համար»¹:

518 թ. նոր գահակալ դարձավ Հուստինոս I-ը, ով «հավատի հարցում բաժանում էր Հռոմի տեսակետները»²: Նա արմատապես փոխեց Բյուզանդիայի կրոնական քաղաքականությունը և քայլեր ձեռնարկեց քաղկեդոնականություն պարտադրելու ճանապարհով Հռոմեական աթոռի հետ հարաբերությունները վերականգնելու ուղղությամբ: Այդպես Արևելքում կրկին ծայր առան կրոնական հալածանքները: Լեոն գտնում է, որ «Կրոնական շահերը չէին այդ վարմունքի դրդապատճառը, այլ քաղաքական մեծամիտ ձգտումները»³: Բանն այն է, որ այդ գործընթացում իրապես «Դժվար է առանձնացնել այն, ինչը պատկանում էր Հուստինոսին և այն, ինչում կարելի էր տեսնել նրա ազգականի (Հուստինիանոսի՝ Լ. Ք.) ազդեցությունը, որը կառավարման գործում հանդիսանում էր նրա գործունյա օգնականը»⁴:

Կայսերական քաղաքականության առանցքային դրսևորումներից մեկը դարձավ Կ. Պոլսի 518 թ. հուլիսի եպիսկոպոսական ժողովը, որը կանոնական համարեց այսպես կոչված **Հորմիզդի բանաձևը**, «... որով ոչ միայն հռչակվում էր քաղկեդոնական քրիստոսաբանության ճշմարտությունը, այլև հավաստվում էր, որ առաքելական շրջանից հենց Հռոմում է պահպանվել քրիստոնեական ճշմարիտ հավատքը»⁵: Ժողովը որոշեց նաև եկեղեցական դիպտիխներում ավելացնել «Կյուրեղ Ալեքսանդրացուն հավասարապատիվ Լեոն պապի անունը», դիպտիխներից դուրս հանել Ջենոն և Անաստաս կայսրերի անունները, բանադրել և աթոռազրկել Սևիրոսին⁶: Դրա հիման վրա կազմվել է նաև կայսերական հրամա-

¹ Տե՛ս Հ. Մ. Բարթիկյան, Բյուզանդիա և Հայաստան // «Լրաբեր հասարակական գիտությունների», 1971, № 3, էջ 26:

² Տե՛ս **Ջաքարիա Միտիլինացի**, Ժամանակագրություն / **Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, 8, **Ասորական աղբյուրներ**, Ա, Երևան, 1976, էջ 279-280:

³ **Լեո**, Հայոց պատմություն, հ. II, էջ 156:

⁴ **Успенский Ө.И.** История Византийской Империи. Т. I, с. 411. Տե՛ս նաև Տե՛ս **Sacrorum conciliorum nova et amplissima collectio** (ed. by Mansi J.-D.). Vol. VIII, col. 435, 436, 488.

⁵ **Католическая энциклопедия**. Т. I, М., 2002, с. 1391.

⁶ Մանրամասները տե՛ս **Sacrorum conciliorum nova et amplissima collectio** (ed. by Mansi J.-D.). Vol. VIII (Ab anno CCCXCII. ad annum DXXXVI. Inclusive.). Florentiæ, MDCCCLX (1762), col. 1057-1065, 1142-1147.

նագիր, որ «... (Քաղկեդոնի) ժողովը և Լեոի Տոմարը ճանաչեն (երկրում)»¹:

Այդպես VI դարի 20-ական թվականների սկզբին Բյուզանդական կայսրությունը հակաքաղկեդոնականների նկատմամբ որդեգրեց կրոնական հարկադրանքի քաղաքականություն, որն ամենուր ուղեկցվեց աննախադեպ բռնություններով. «... Յուստինոս անարևն թագաւորէր, այդ կապակցությամբ գրում է Հովհաննէս Դրասխանակերտցին, - սա առլցեալ չարութեամբ, զխլեալ եւ զջնջեալ եւ զանյայտեալ զքաղկեդոնական զչարափառութիւնն կրկին նորոգէր եւ զանտանելի վտանգսն վշտալից տանջանաց արանց սրբոց եւ ուղղափառաց ի վերայ հասուցանէր. եւ դարձեալ արեամբ շաղախէր եւ գյատակս եկեղեցոյ սրբոյ»²: Ու թեև Փիլոն Տիրակացին հավաստում է, որ Հուստինոս I-ը «... դարձեալ նորոգեաց զաղմկեալ ժողովոյն նորոգածեութիւն սահման՝ ի թագաւորաբնակ միայն քաղաքին, այդ ոչ յամենայն կողմանս Յունաց աշխարհին»³, սակայն այս պնդումը արմատական վերանայման կարիք ունի: Հուստինոս I-ի կրոնական քաղաքականության «գլխավոր նվաճումն» է համարվում Հռոմի և Կ. Պոլսի աթոռների 35-ամյա պառակտման հաղթահարումը, սակայն աներկբա է, որ այդ «... համաձայնության գինը հանդիսացան եկեղեցական միասնության զոհասեղանին մատուցված սարսափելի զոհերը»⁴:

Բայց, քանի որ «Անկարելի էր տարբեր հոգեբանություններով, տարբեր պատմություններով ազգերը միացնել մի տեսակ աշխարհայացքի, մի միակ ըմբռնումի մեջ, նույնիսկ բռնի միջոցներով»⁵, հակաքաղկեդոնականությունը նահատակության ճանապարհով է՛լ ավելի ամրապնդվեց

¹ **Ջաքարիա Միտիլինացի**, Ժամանակագրություն, էջ 282-283:

² **Յովհաննէս Դրասխանակերտցի**, Պատմութիւն Հայոց / **Մատենագիրք Հայոց**, ԺԱ հատոր, Ժ դար: Պատմագրութիւն երկու գրքով, գիրք Ա, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 395:

³ **Փիլոն Տիրակացի**, Ժամանակագրութիւն / **Մատենագիրք Հայոց**, Ե. հատոր, Է. դար, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 960:

⁴ **Успенский Ө.И.** История Византийской Империи. Т. I, с. 411. Աքսորվել են ավելի քան 50 հակաքաղկեդոնական եպիսկոպոսներ, հալածանքների ենթարկվել Ասորիքի հակաքաղկեդոնական վանքերն ու համայնքները, մանրամասները տե՛ս **Ժամանակագրութիւն Տեառն Միխայէլի Ասորոց Պատրիարքի**, Յերուսաղեմ, 1871, էջ 219-225:

⁵ **Լեո**, Հայոց պատմություն, հ. II, էջ 141:

Բյուզանդական Արևելքում, Եգիպտոսում ու ասորական անապատում՝ չնայած աննախադեպ հալածանքներին: Այսինքն «... Հուստինոս Ա-ի կազմակերպած աքսորներն ու հալածանքներն արդյունք չտվեցին, և բացի այդ, նա չկարողացավ Արևմուտքի հետ լիարժեք կապեր հաստատել. իրականում վիճակն ավելի վատացավ և միաբնակ տարրերին իր դեմ հանեց, որոնք այլևս պայքարի բացահայտ ուղին բռնեցին»¹:

Հուստինոս I-ի կրոնական քաղաքականությունը ծավալվել է նաև բյուզանդական Հայաստանում, որտեղ բռնի քաղկեդոնականություն է տարածվել: Դրանից զատ, **Հուստինոս I-ի արտաքին քաղաքականության հետևանքով Հայաստանի պարսկական հատվածը ևս ենթարկվել է ասպատակությունների ու ավերի**: Պրոկոպիոս Կեսարացին գրում է, որ Լազիկեի շուրջ բյուզանդապարսկական հակամարտության շրջանում հռոմեական զորքերը ներխուժել են Պարսկահայաստան և «մեծ տարածություն ավարի առնելով ու գերեվարելով բազմաթիվ հայերի, հեռացել են» երկրից: Պատմիչը նաև վկայում է, որ հռոմեացիները ևս մեկ արշավանք են ձեռնարկել Հայաստանի վրա, սակայն հայազգի Նարսեսի ու Արատիոսի ղեկավարած զորքերը այս անգամ հաղթել են թշնամուն²:

Այսպիսով, VI դարի 20-ական թթ. Բյուզանդիան ենթակա հայերի նկատմամբ իրականացրել է խտրական քաղաքականություն: Դրությունը է՛լ ավելի է ծանրացել VI դարի 30-60-ական թթ.³ Հուստինիանոս I կայսեր ներքին և արտաքին քաղաքականության հետևանքով:

Հուստինիանոս I-ը «երազում էր վերականգնել կայսրության երբեմնի վեհությունը և նրան վերադարձնել կեսարների ու օգոստոսների նախկին ժամանակները (ընդգծումը մերն է՝ Լ. Բ.)»³: Այդ նպատակների իրագործումը կայսրն օրգանապես շաղկապել է երկրի ռազմական հզորության ամրապնդման և քաղաքացիական իրավունքի զարգացման հետ: Եվ, քանի որ նրա «... գերագույն բաղձանքն էր վերանվաճել կորսված Արևմուտքի

¹ Հ. Գ. Մելքոնյան, Հովհան Եփեսացի / Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 8, Ասորական աղբյուրներ, Ա, Երևան, 1976, էջ 325::

² Տե՛ս Պրոկոպիոս Կեսարացի, Պատերազմների մասին, գիրք առաջին, գլ. 13 / Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Երևան, 1967, էջ 29-30:

³ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում: Քաղաքական կացությունը ըստ նախարարական կարգերի, Երևան, 1987, էջ 147-148:

նահանգները»¹, արտաքին քաղաքականության մեջ անխուսափելիորեն ընթացել է դեպի աշխարհակալություն, իսկ ներքին քաղաքականության մեջ՝ դեպի միահեծանություն²: Այդ քաղաքականությունը նա ծավալել է նաև Բյուզանդական Հայաստանում, որի արդյունքում լիովին կազմալուծվել է բյուզանդահայության ազգային և հոգևոր կյանքը: Բյուզանդական կայսրության համար օրակարգային էր Հայաստանը նվաճելու ռազմավարական ծրագիրը, փոխվել էին միայն այդ նպատակին հասնելու միջոցները:

Դեռևս 374-378 թթ. ընթացքում Հռոմեական կայսրության ենթակայության տակ անցած Մեծ Հայքի հարավային (Անձիտ, Անգեղտուն, Հաշտյանք, Մեծ Ծոփք, Շահունյաց Ծոփք և Բալահովիտ) գավառներում³ վարչական փոփոխությունների սկիզբը դրվեց Ջենոն կայսեր օրոք՝ 485 թ.: Ներքին Հայքում (ըստ բյուզանդական պատմագրության՝ Մեծ Հայք), այսինքն՝ 387 թ. հետո կայսրությանն անցած Մեծ Հայքի անդրեփրատյան գավառներում, իրավաքաղաքական կացությունը պահպանվեց մինչև Հուստինիանոսի բարենորոգումների շրջանը, իսկ հռոմեական պրովինցիայի վերածված Փոքր Հայքը⁴ դարձել էր կայսրության օրգանական մասը՝ նրան շաղկապված պետական կյանքի բոլոր թելերով⁵:

Հուստինիանոս I կայսեր նպատակն էր, որպեսզի Բյուզանդական Հայաստանը կատարելապես ենթարկվեր հռոմեական օրենքներին և ոչնչով չտարբերվեր կայսրության այլ հատվածներից: Ինչպես Ն. Ադոնցն

¹ **Շարլ Դիլ**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, Երևան, 2005, էջ 73:

² Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 148:

³ Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 41: Պրոկոպիոս Կեսարացին թվարկում է հինգ սատրապություն (բաց է թողնում Անգեղտուն գավառը), տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, Կառուցումների մասին / **Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, 5, **Բյուզանդական աղբյուրներ**, Ա, էջ 191: Տե՛ս նաև **Еремян С. Т.** Византийская Армения в V-VI вв. / **Очерки истории СССР: Кризис рабовладельческой системы и зарождение феодализма на территории СССР III-IV вв.**, М., 1958, с. 213.

⁴ Մանրամասները տե՛ս **Հայ ժողովրդի պատմություն**, հ. I, Երևան, 1971, էջ 704, 718, 721, 768. Ըստ Ա. Շահինյանի Փոքր Հայքը ունեցել է 68 100 քառ. կմ. տարածք, տե՛ս **Шагинян А. К.** Армения и страны Южного Кавказа в условиях византийско-иранской и арабской власти. СПб., 2011, с. 45.

⁵ Մանրամասները տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 80-106, 109-122, **Հայ ժողովրդի պատմություն**, հ. II, էջ 217:

է ցույց տալիս, կայսեր քաղաքականության նպատակն էր «Այդ կիսանկախ երկիրը դարձնել կայսրության սովորական պրովինցիա ընդհանուր հիմունքներով (ընդգծումը մերն է՝ Լ. Ք.)»¹:

532 թ. պարսկաբյուզանդական «հավիտենական հաշտությունը» սահմանային որևէ փոփոխություն չէր նախատեսում², ինչը կայսրին թույլ տվեց պատեհ առիթն օգտագործել ընդդեմ արևմտահայ ինքնավարությունների: Նա վերացրեց բյուզանդական «Մեծ Հայքի» կոմեսի պաշտոնը, սատրապական գավառներում վերացրեց տեղի ազգային իշխանությունները: Դրանով իր վախճանին հասավ Արևմտյան Հայաստանի «-զինվորական վերակազմության գործը», լուծարվեց Ներքին Հայքի և Սատրապական Հայաստանի ներքին ինքնավարությունը և անուղղելի հարված հասցվեց հայկական զինական ուժին: Բյուզանդահպատակ հայկական բոլոր գավառները միավորվեցին զինվորական ստրատեգոսի կամ մագիստրոսի իշխանության տակ³:

Հաջորդիվ կայսրը զարկ տվեց բյուզանդահայ գավառների վարչաքաղաքական բարեփոխումների գործին. ստեղծել կուռ վարչակարգ, սահմանել պաշտոնյանների պարտականությունները՝ ահա դրանք էին

¹ Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 151:

² Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. II, Երևան, 1984, էջ 232: Տե՛ս նաև **Агафий**. О царствовании Юстиниана. Гл. II, 19, с. 52. Պարսկաբյուզանդական այդ դաշինքը բնութագրվում է նաև «Խոսրովի անհաղթելիության դավանանք», տե՛ս **Կ. Գլխտերոբ**, Բիզանդիոն եւ Պարսկաստան եւ անոնց դիանագիտական եւ ազգային-իրաական յարաբերությունները Յուստինիանու ժամանակ / **Ազգային Մատենադարան**, ԿԲ, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1911, էջ 73: Մենանդրոս պատմիչը վկայում է նաև, որ լրացուցիչ պայմանագրով «հատուկ որոշում է ընդունվել Պարսկաստանում ապրող քրիստոնյաների մասին», համաձայն որի քրիստոնյաներին անարգել թույլ է տրվել եկեղեցիներ կառուցել և աղոթել: «Արգելվել է քրիստոնյաներին պարտադրել մոզերի հավատքը», իսկ «քրիստոնյաներին արգելվել է մոզերին դարձնել իրենց հավատքին», տե՛ս **Византийские Историки**. Дексиппъ, Эвнапій, Олимпіодоръ, Малхъ, Петръ Патрицій, Менандръ, Кандидъ, Ноннось и Теофан Византиецъ, СПб., 1860, с. 345-346. Շ. Դիլը այդ պայմանավորվածությունը որակում է որպես «Հուստինիանոսի ջանքերով նվաճված կրոնական հանդուրժողականության կատարյալ դրսևորում», տե՛ս **Диль Ш**. Император Юстиніанъ и византийская цивилизация въ VI вѣкѣ, с. 224.

³ Տե՛ս Ն. Ադոնց, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 151-155, տե՛ս նաև **Հայ ժողովրդի պատմություն**, հ. II, էջ 238-239:

կայսերական իշխանության մեծ հոգսերը¹:

535 թ. ապրիլի 15-ին Հուստինիանոս I-ը հրապարակեց երկու նովելլա (նոր օրենք): Առաջինը պահանջում էր երկրում «մաքուր ձեռքերի» քաղաքականություն հաստատել, վերջ դնել տեղերում արմատավորված կամայականությանը, անիշխանությանը և արդարադատության «բարքերի քայքայմանը»: Զուգահեռաբար, հարկերի և տուրքերի կարգավորման միջոցով կայսրը պահանջում էր կանոնավորել նաև պետական գանձարանը՝ դրանով իսկ ապահովելով իր աշխարհակալ քաղաքականության «ֆինանսական հիմքերը»²:

Հուստինիանոս I-ը հրապարակեց նաև վարչատարածքային բարեփոխումներին միտված մի շարք նովելլաներ, որոնք ուղղված էին կայսրությունը «մանր մասերի բաժանելու» քաղաքականության դեմ³: Նա ընդարձակեց նահանգային կառավարիչների լիազորությունները, քաղաքացիական ու զինվորական իշխանությունները կենտրոնացրեց միևնույն պաշտոնյայի ձեռքում⁴: Այդ բարեփոխումներն իրականացվեցին նաև Արևմտյան Հայաստանում: Վկայակոչելով «Արևմտյան Հայաստանի անկարգ վիճակը ներդաշնակությամբ փոխարինելու» անհրաժեշտությունը՝ 536 թ. մարտի 18-ին կայսրը հրապարակեց Բյուզանդական Հայաստանի վարչաքաղաքական բարեփոխումների սկիզբն ազդարարող 31-րդ նովելլան⁵: Կայսեր ջանքերով Արևմտյան Հայաստանում ստեղծվեցին վարչաքաղաքական գերմեծար նոր միավորներ, որոնք բոլորն էլ կրում էին «Հայք» անունը՝ Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք և Չորրորդ Հայք⁶, և ոչ միայն մասնատում Հայաստանի բյուզանդական մասը⁷,

¹ Տե՛ս **Շարլ Դիլ**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, էջ 81:

² Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 181-182: Տե՛ս նաև **Շարլ Դիլ**, Բյուզանդիայի պատմության հիմնախնդիրները, էջ 81-82:

³ Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 186:

⁴ Մանրամասները տե՛ս **նույն տեղում**, էջ 186-188:

⁵ Տե՛ս **Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելլան Հայաստանի վարչական բարենորոգումների վերաբերյալ / Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, հ. 5, **Բյուզանդական աղբյուրներ**, Ա, Պրոկոպիոս Կեսարացի, էջ 303-306:

⁶ Մանրամասները տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 190-193, 199:

⁷ Պրոկոպիոս պատմիչը վկայում է, որ Արևմտյան Հայաստանը «ամուր կապանքների մեջ էր առնված, երկրամասի վրա դրված են անօրինակ ծանր հարկեր, իսկ ողջ հայ [-

այլև այն վերածում կայսրության սովորական մարզի: Արդյունքում կործանվեցին հայ նախարարների ինքնավար իրավունքները, խաթարվեց հայ ազգաբնակչության միավորման գործընթացը, խորտակվեցին ազգային նախարարական ավանդությունները¹:

535 թ. հուլիսի 23-ին Հուստինիանոսը հրապարակեց հայերի ավանդական ժառանգական իրավունքի դեմ ուղղված երկու իրավական փաստաթուղթ², որը, ըստ Ն. Ադոնցի, «Հուստինիանոսի բարենորոգումների էությունը բացահայտող բանալին էր»³: Հայերին պարտադրվեց հռոմեական օրենքներով հաստատված տղամարդկանց և կանանց ժառանգական իրավունքը⁴, ինչը ցույց է տալիս, որ կայսեր ձգտումն ու ջանքերը եղել են «... հայ նախարարների հողատիրության վրա հենված հզորության աղբյուրը ցամաքեցնել, որովհետև առանց դրան հնարավոր չէր «յուրացնել» Հայաստանը»⁵: Հայոց կենցաղում բյուզանդական օրենքների առաջնությունն ամրագրելու պահանջի դիրքերից Հուստինիանոսը պնդում է. «Հայաստանում իրավական նորմերը ոչ մի բանով չպետք է տարբերվեն հռոմեական նորմերից: Քանի որ հայերը մեր պետության մեջ են մտնում, մյուս ժողովուրդների նման ենթարկվում են մեզ և ... նրանց կանայք չպիտի զրկվեն մեզ մոտ գոյություն ունեցող իրավահավասարությունից»⁶: Այսպիսով՝ «Հուստինիանոսի թագավորությունը մի աղետ էր հայ ժողովրդի գլխին: Նա վերջնական հարված հասցրեց հայ-

ժողովուրդը] ստրկացված և ցրված է ամբողջ հռոմեական երկրով մեկ», տե՛ս **Պրոկոպիոս Կեսարացի**, Պատերազմների մասին, էջ 234-235:

¹ Տե՛ս **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 228-230, 235:

² Խոսքը 535 թ. հուլիսի 23-ին հրապարակված «Հայոց ժառանգական իրավունքի մասին» հրովարտակի և 536 թ. մարտի 18-ին հրապարակված «Հայերի մասին, որպեսզի նրանք ևս ամեն ինչում հետևեն հռոմայեցիների օրենքներին ...» 21-րդ նովեղայի մասին է, տե՛ս **Օտար Աղբյուրները Հայաստանի և հայերի մասին**, հ. 5 / **Բյուզանդական աղբյուրներ**, Ա, Պրոկոպիոս Կեսարացի, էջ 300-302:

³ Տե՛ս «**Հայոց ժառանգական իրավունքի մասին**» Հուստինիանոսի հրովարտակը, էջ 300:

⁴ Տե՛ս **նույն տեղում**:

⁵ **Հայ ժողովրդի պատմություն**, հ. II, էջ 247:

⁶ «**Հայերի մասին, որպեսզի նրանք ևս ամեն ինչում հետևեն հռոմայեցիների օրենքներին ...**» 21-րդ նովեղան, էջ 301, **Ն. Ադոնց**, Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, էջ 209-210:

կական ինքնուրույն պետականության պահպանված նշույլներին, ... փորձեց սասանել հայոց ժառանգական դարավոր իրավունքը»¹:

Ըստ էության նույնը պետք է ասել նաև Հուստինիանոս I կայսեր կրոնական քաղաքականության մասին: Կայսեր կրոնական քաղաքականության հիմնական նպատակներից մեկն էլ «Արևելքի պապական կենտրոնի»՝ Կ. Պոլսի պատրիարքության դերի բարձրացումն էր, որով եկեղեցական գերագույն իշխանության ամուր կենտրոնի վերածված Կ. Պոլսի պատրիարքության միջոցով նա անմիջական հսկողության տակ կվերցնեք Արևելյան բոլոր եկեղեցիները: Արևելքում կայսեր կողմից քաղկեդոնականության հարկադրանքի արդյունքում, «... անհանդուրժողականությունը դարձավ պետական առաքինություն ու խղճի պարտք, և Հուստինիանոսը անողորքաբար այն կիրառեց գործնականում»²:

Ճիշտ է, Բյուզանդական Հայաստանում Հուստինիանոս I-ը առերևույթ կրոնական հարկադրանք չի կիրառել, սակայն պնդել է, որ ոչինչ չպետք է փոխվի նաև «մետրոպոլիտների իրավունքների հարցերում, ո՛չ էլ նրանց ձեռնադրության գործում»³: Դա նշանակում էր, որ ա) Բյուզանդական եկեղեցու մետրոպոլիտների իշխանությունը պահպանվում էր նոր կազմավորված վարչական տարածքներում, ինչը բ) լայն դուռ էր բացում տեղերում բյուզանդականացումն արմատավորելու առջև: Միաժամանակ, այդ տարածաշրջանում կայսրը զարկ է տվել նաև եկեղեցաշինությանը, ինքնին հասկանալի է՝ քաղկեդոնական: Այդպես է նա կյանքի կոչել իր աստվածապետական կրոնական քաղաքականությունը, որի հիմքում ընկած էր «միասնական կայսրության տարածքում պետք է գոյություն ունենա ընդհանրական մեկ հավատք և մեկ հոգևոր-եկեղեցական իշխանություն» կարգախոսը⁴:

Փաստացի Հուստինիանոսը առաջնահերթություն է համարել «միաբ-

¹ Հ. Բարթիկյան, Պրոկոպիոս Կեսարացին և նրա գրական ժառանգությունը / Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, 5, Բյուզանդական աղբյուրներ, Ա, Պրոկոպիոս Կեսարացի, էջ VII-VIII:

² Տե՛ս նույն տեղում, էջ 171-172:

³ Հայաստանի վարչական բարենորոգումների վերաբերյալ Հուստինիանոս կայսեր 31-րդ նովելլան, էջ 305:

⁴ Մանրամասները տե՛ս Knecht August. Die Religions-Politik Kaiser Justinians I (Inaugural-Dissertation). Würzburg, 1896, S. 62-65.

նակներին ճշմարիտ հավատքի» գիրկ վերադարձնելը¹, և այդ հարկադրական ծրագրի իրականացման արդյունքում, ինչպես Եվագրիոս պատմիչն է վկայում, «... այդուհետ բոլոր եկեղեցիներում բացահայտ դավանում են Քաղկեդոնի ժողովը, և ոչ ոք չի համարձակվում այն բանադրանքի ենթարկել, **իսկ այլ կերպ մտածողներին հազարավոր միջոցներով հարկադրում էին համաձայնության գալ** (ընդգծումը մերն է՝ Լ. Բ.)»²:

Քանալի բառեր՝ Բյուզանդական կայսրություն, հայ-բյուզանդական հարաբերություններ, քաղկեդոնականություն, հակաքաղկեդոնականություն, կայսր Հուստինոս I, կայսր Հուստինիանոս I

АРМЕНИЯ В СФЕРЕ АРМЯНО-ВИЗАНТИЙСКИХ ПОЛИТИЧЕСКИХ ОТНОШЕНИЙ (520-560-ЫЕ ГОДЫ)

Лиза Каримян

Ключевые слова: *Византийская империя, армяно-византийские отношения, халкидонизм, антихалкидонизм, император Юстиан I, император Юстиниан I*

В статье с помощью сравнительного анализа исторических документов и источников показывается, что в 20-60-ых годах VI века одним из главных столпов как внутренней, так и внешней политики Византии являлся религиозный фактор, в частности принуждение халкидонизма.

Констатируется тот факт, что будучи неспособной установить нормальные межцерковные отношения между догматическими течениями разделенной церкви, с 20-ых годов VI века Византийская империя рассматривала насильственное установление халкидонизма как основу догматического единства, что также проявилось в отношениях с соседними странами.

¹ Մանրամասները տե՛ս **Болотов В. В.** Лекции по истории древней Церкви. Т. IV, с. 382-383.

² **Евагрий Схоластик.** Церковная история. Кн. IV, гл. 11, с. 289: Ու. Ֆրենդի համոզմամբ այդ քաղաքականության արդյունքում կայսրությունում տեղի ունեցավ պաշտոնական՝ քաղկեդոնական և հակաքաղկեդոնական հոսանքների վերջնական պառակտումը և այդ պահից սկսած միաբնակությունը պատմականորեն դարձավ քրիստոնեական առանդներից մեկը, տե՛ս **Frend W. H. C.** The rise of the Monophysite Movement. Chapters in the history of the church in the fifth and sixth centuries. Cambridge, 1979, p. 275-276:

Утверждается, что в разных периодах времени империя осуществляла политику национального уничтожения национальной идентичности на армянских территориях, перешедших Византии. На армянских территориях, подлежащих Византии, политика также сопровождалась религиозной нетерпимостью и принуждением.

**ARMENIA IN THE AREA OF ARMENIAN-BYZANTINE
POLITICAL RELATIONS
(FROM THE 20S TO 60s OF THE SIXTH CENTURY)**

Liza Qarimyan

Key words: *Byzantine empire, Armenian-Byzantine relations, chalcedonism, antichalcedonism, emperor Justin I, emperor Justinian I*

A comparative analysis of historical documents and sources shows that the religious factor stood as a main pillar of the both domestic and foreign policy of the Byzantine Empire in the 20s to 60s of the sixth century, particularly the coercion of Chalcedonism.

The Byzantine Empire is proved unable to establish natural inter-church relations between the religious confessions of the divided church, therefore from the 20s of the sixth century the establishment of religious unity was considered to be the basis for the violent compulsion of Chalcedonism, which manifested itself in its relations with neighboring countries.

It is alleged that the Empire has consistently pursued a policy of destroying national identity of the Armenian territories passed to Byzantium at various spans of times as well as religious intolerance and enforcement.